**Համաձայնագիր-1**
***22.12.2020թ. կնքված N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին***

**ք. Տաշիր** «17» **փետրվարի 2021թ.**

«ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Է. Արշակյանի, որը գործում է Տաշիրի համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Պողոսյանի, որը գործում է «ՇԻՆ» ՍՊԸ–ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 22.12.2020թ. կնքված N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով կողմերի միջև 2020թ. դեկտեմբերի 22-ին կնքված ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար Տաշիր համայնքի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման **N «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01»** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1.1.1 Պայմանագիրը լրացնել N2 «Վճարման ժամանակացույց» հավելվածով՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

2. **Համաձայնագրի գործողության ժամկետը**

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական, որոնցից մեկ օրինակը հանձնվում է Կատարողին, իսկ մյուս օրինակը՝ Պատվիրատուին:

4. **ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| | |
|---|---|
| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
| **Տաշիրի համայնքապետարան** | **«ՇԻՆ» ՍՊԸ** |
| **ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94** | **ք. Տաշիր, Գետափնյա 45** |
| **ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն** | **ՀՎՀՀ 06948694** |
| **Հ/Հ 900272260028** | **ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ** |
| **ՀՎՀՀ 06954139** | **Հ/Հ 1150008728008002** |
| ----------------------------Է. Արշակյան | -----------------------------Դ. Պողոսյան |
| **(ստորագրություն)** | **(ստորագրություն)** |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

*Հավելված 1*
*« 17 » փետրվարի 2021թ. կնքված N 1 համաձայնագրի*
*Հավելված N 2*
*«22» դեկտեմբերի 2020թ. կնքված*
*ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1. | 90511100/502 | **Տաշիր համայնքի կենցաղային աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ** | ... | 4070000 | 8143000 | 12216000 | 16289000 | 20362000 | 24435000 | 28508000 | 32581000 | 36654000 | 40727000 | 44800000 | 44800000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**Տաշիրի համայնքապետարան**
**ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94**
**ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն**
**Հ/Հ 900272260028**
**ՀՎՀՀ 06954139**

**---------------------------------Է. Արշակյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**«ՇԻՆ» ՍՊԸ**
**ք. Տաշիր, Գետափնյա 45**
**ՀՎՀՀ 06948694**
**ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ**
**Հ/Հ 1150008728008002**

**---------------------------------Դ. Պողոսյան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՁՈՐԱԳԵՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ «ДЗОРАГЕТ»
"ARMBUSINESSBANK" CJSC
"DZORAGET" BRANCH

N 50-045

«16» 02 2021

Հավելված 4.1
«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01»* ծածկագրով
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ հրավերի

**ԵՐԱՇԽԻՔ N 2103**
**(որակավորման ապահովում)**

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով կազմակերպված
ընթացակարգի ծածկագիրը

կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում <<ՇԻՆ>> ՍՊԸ-ի
ընտրված մասնակցի անվանումը

(այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01
կնքվելիք պայմանագրի համարը

պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող
երաշխիքը տվող բանկի անվանումը

անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 44,800,000 (քառասունչորս միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ
գումարը թվերով և տառերով

(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900275081108 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
հաշվեհամարը

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01
կնքվելիք պայմանագրի համարը

ծածկագրով կնքվելիք պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 28/12/2021 (քսանութը դեկտեմբերի երկու հազար քսանմեկ թվական )
կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետը,

օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնատվող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում
կնքվելիք պայմանագրի համարը

կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Գործադիր մարմնի ղեկավար**
**<<Ձորագետ>> մ/ճ կառավարիչ** Շահեն Ղամբարյան
անուն, ազգանուն, պաշտոն

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ՁՈՐԱԳԵՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ «ДЗОРАГЕТ»
"ARMBUSINESSBANK" CJSC
"DZORAGET" BRANCH

N 50-047

«16» 02 2021

Հավելված 5
«ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01»* ծածկագրով
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ Հրավերի

**ԵՐԱՇԽԻՔ N 2104**
**(պայմանագրի ապահովում)**

1.Սույն Երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և ընտրված մասնակցի
<<ՇԻՆ>> ՍՊԸ-ի միջև
անվանումը
կնքվելիք N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01 պայմանագրից բխող պրինցիպալի
կնքվելիք պայմանագրի համարը
պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահով:

2. Երաշխիքով <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող
երաշխիք տվող բանկի անվանումը
անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 4,480,000 (չորս միլիոն չորս հարյուր ութսուն հազար ) ՀՀ դրամ
գումարը թվերով և տառերով
(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900275031108 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
հաշվեհամարը

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքվելիքN ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01
կնքվելիք պայմանագրի համարը
պայմանագրին ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 28/12/2021 (քսանութը դեկտեմբերի երկու հազար քսանմեկ թվական )
կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման վերջնաժամկետը, ներառյալ երաշխիքային ժամկետը
օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) N ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԾՁԲ-21/01 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված
կնքվելիք պայմանագրի համարը
կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.
2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր մարմնի ղեկավար
<<Ձորագետ>> մ/ճ կառավարիչ Շահեն Ղամբարյան
անուն, ազգանուն, ստորագրություն